ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/59

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 24.05.2018թ. թիվ 03/26-3/9305-18 գրությամբ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00883436) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 21.04.2018թ. թիվ 01/61-11572 գրության հիման վրա, 24.05.2018թ. նախաձեռնել է «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 21.04.2018թ. թիվ 01/61-11572 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 16.03.2018 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/16» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Աշխատանքը կատարվում է նույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ պայմանագրի կատարման ժամկետ է սահմանված՝ պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. ապրիլի 30-ը:

Տեղեկացնում եմ, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրի 1.1 և 1.2 կետերի պահանջները, այն է՝ Պայմանագրով նախատեսված ժամկետում պատվիրատուին չեն տրամադրվել նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է նույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը փաստացի չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը միակողմանի հրաժարվել է կնքված աշխատանքների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցիչ Նարինե Կիրակոսյանը:

3. <u>«Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն 13.06.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 21.05.2018թ. թիվ 01/61-11572 գրության հիման վրա, 24.05.2018թ. թիվ 03/26-3/9305-28 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին /այսուհետ նաև՝

Բողոքներ քննող անձ/ և նախաձեռնել է «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Գտնում ենք, որ առկա չեն հիմքեր Ընկերությանը ցուցակում ներառելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

1. «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել և մասնակցել Երևանի քաղաքապետարանի /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից հայտարարված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/16» ծածկագրով գնման ընթացակարգին /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.03.2018թ. թիվ 3 որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է հաղթող մասնակից:

3. Երևանի քաղաքապետարանի և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 2018թ. մարտի 16-ին կնքվել է աշխատանքների գնման թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/16» ծածկագրով պայմանագիրը /այսուհետ նաև՝ Պայմանագիր/:

4. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Ընկերությունը ստանձնում է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը /այսուհետ նաև՝ Աշխատանք/՝ համաձայն Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Նույն կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Աշխատանքը կատարվում է Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

5. Պայմանագրի թիվ 1 հավելվածի, տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պետք է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից մինչև ապրիլի 30-ը ներառյալ հանձներ տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքները:

6. Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Ընկերությունը էականորեն խախտել է Պայմանագիրը: Ընկերության կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

7. Պայմանագրի 6-րդ կետի համաձայն՝ նույն պայմանագրում և նույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է նույն պայմանագիրը կնքելուց հետո, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են /.../ քաղաքական հուզումները, գործադուլները /.../, որոնք անհնարին են դարձնում նույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

8. Պայմանագրի 7-րդ կետի 7.12 ենթակետի համաձայն՝ Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9. Պատվիրատուն հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը՝ միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Գտնում ենք, որ առկա չեն հիմքեր Ընկերությանը Ցուցակում ներառելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

«Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի աշխատակիցները և տնօրենը 2018թ. ապրիլի 13-ից մինչև մայիսի 8-ը Հայաստանի Հանրապետությունում ստեղծված իրավիճակով պայմանավորված մասնակցել են խաղաղ անհնազանդության երթերին, հայտատարել են գործադուլ և նշված քաղաքական հուզումների օբյեկտիվ պատճառով Ընկերությունը զրկված է եղել իր պարտավորությունները կատարելու հնարավորությունից: Մասնավորապես, Ընկերությունը պետք է մինչև 2018թ. ապրիլի 30-ը կատարեր «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/16» ծածկագրով պայմանագրով նախատեսված պարտավորությունները, սակայն վերոհիշյալ պատճառով չի կարողացել պայմանագրով նախատեսված աշխատանքը հասցնել ավարտին:

Բացի այդ, ցանկանում ենք նշել, որ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն ս.թ. մայիսի 10-ից անցնելով իր բնականոն աշխատանքային ռեժիմին, դիմել է Երևանի քաղաքապետարան և հայտնել է, որ Երևանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճի նորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ուշացումը պայմանավորված է նաև նրանով, որ թատրոնի դահլիճի նոր օդափոխության

համակարգի անցկացման համար անհրաժեշտ քանակով հոսանք թատրոնի շենքը այժմ չունի, այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջացել դիմել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին անհրաժեշտ քանակությամբ հոսանքի համար տեխնիկական պայմաններ ստանալու համար, որպեսզի հնարավոր լինի շարունակել Պայմանագրով նախատեսված թիվ 1 հավելվածի՝ Տեխնիկական բնութագրի մեջ ներառված թատրոնի դահլիճի օդափոխության մասով նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը:

Ընկերությունը խնդրել է Պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման ժամկետը երկարաձգել մինչև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին անհրաժեշտ քանակությամբ հոսանքի միացման համար տեխնիկական պայման ստանալը:

Սակայն, Երևանի քաղաքապետարանը Ընկերությանը 18.05.2018թ. ուղղված թիվ 61/685 գրությամբ տեղեկացրել է, որ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը՝ միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Ընկերությունը նաև Բողոքներ քննող անձին պարտավորվում է ներկայացնել ապացույց այն մասին, որ Երևանի Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճի նոր օդափոխության համակարգի անցկացման համար անհրաժեշտ քանակով հոսանք թատրոնի շենքը չի ունեցել, իսկ Պայմանագրով սահմանված աշխատանքների իրականացման համար պետք էր, որպեսզի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն անհրաժեշտ քանակությամբ հոսանքի համար տեխնիկական պայմաններ տար: Վերոնշյալ ապացույցներ ներկայացնելու համար Ընկերության կողմից ձեռնարկվել են բոլոր անհրաժեշտ միջոցները և մինչև Բողոքներ քննող անձի կողմից վերջնական որոշում կայացնելը կներկայացվեն համապատասխան փաստաթղթերը:

Ելնելով վերագրյալից խնդրում ենք՝

1. Ընկերությանը հնարավորություն ընձեռել, որպեսզի ներկայացվեն համապատասխան ապացույցներ սույն ընթացակարգի քննության համար,

2. «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել՝ Ընկերությանը չներառել ցուցակում»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Տարոն Վիրաբյանը և լիազորված ներկայացուցիչ՝ Ռաֆայել Մկրտչյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/59 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 24.05.2018թ. թիվ 03/26-3/9305-18 գրությունը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի 21.04.2018թ. թիվ 01/61-11572 գրությունը, Երևանի քաղաքապետարանի և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 16.03.2018 թվականին կնքված «ԵՔ–ԳՀԱՇՁԲ–18/16» ծածկագրով գնման պայմանագիրը, «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի կողմից Բողոքներ քննող անձին 13.06.2018թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանի և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 16.03.2018 թվականին կնքվել է «ԵՔ–ԳՀԱՇՁԲ–18/16» ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:
- 1.2 կետի համաձայն՝ Աշխատանքը կատարվում է նույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

• 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է նույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

• 6-րդ կետի համաձայն՝ նույն պայմանագրով և նույն պայմանագրի հիման վրա կնքած համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է նույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում նույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Պայամանագրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը, ի թիվս նույն Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված այլ աշխատանքների, պարտավորվել է կատարել աշխատանք՝ հետևյալ տեխնիկական բնութագրով.

«Դահլիճի օդափոխությունը ապահովել դահլիճի կողային պատերից և առաստաղներից ներմուծման և արտածման ռեկուպերատորով սարքի միջոցով, որը կտեղադրվի շենքի տանիքի վրա: Ամռանը ապահովել դահլիճի օդի ջերմաստիճանը 18-20°C սահմաններում, իսկ ձմռանը՝ 22-25°C սահմաններում:

–Հարդարման սենյակների օդափոխության համար կիրառել ներմուծման և արտածման ռեկուպերատորով սարք, որը կտեղադրվի շենքի տանիքի տակ, ինչպես նաև կապահովի սենյակի օդի ջերմաստիճանը ամռանը 18-20°C, իսկ ձմռանը՝ 22-25°C:

–Ջերմության և սառնության աղբյուրն ապահովելու համար շենքի առաջին հարկում տեղադրել կաթսա, իսկ կաթսայատան կողքին՝ չիլլեր»:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ պայմանագրի կատարման ժամկետ է սահմանված՝ պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. ապրիլի 30-ը:

Ընկերությունը Պայմանագրով նախատեսված ժամկետում պատվիրատուին չի տրամադրել Պայմանագրով նախատեսված նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

Ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ Ընկերության տնօրենը՝ ներկայացնելով Պայմանագրով սահմանված աշխատանքների չկատարման պատճառաբանությունները՝ հայտնեց, որ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի աշխատակիցները 2018թ. ապրիլի 13-ից մայիսի 8-ը մասնակցել են ՀՀ-ում ընթացող խաղաղ անհնազանդության երթերին և հանրահավաքներին, այդ ժամանակահատվածում հայտարարել են գործադուլ, ինչի հետևանքով Ընկերությունը զրկվել է իր պայմանագրային պարտավորությունները մինչև 2018թ. ապրիլի 30-ը կատարելու հնարավորությունից:

Որպես ապացույց՝ Ընկերության տնօրենը Բողոքներ քննող անձին է ներկայացրել Ընկերության թվով երեք աշխատակիցներ՝ Վալերիկ Էդիկի Ղազարյանի, Հայկ Ռուդոլֆի Փաշիկյանի և Արմեն Վասիլի Խաչատրյանի կողմից տրված գրավոր դիմում-հավաստումները վերոգրյալի մասին, ինչպես նաև վերջիններիս՝ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի աշխատակիցներ հանդիսանալու փաստը հավաստող՝ նրանց հետ աշխատանքային պայմանագրեր կնքելու մասին «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի տնօրեն Տ.Վիրաբյանի կողմից հաստատված՝ հիմնադրի թիվ 5 (կազմված 10.07.2013թ.), թիվ 6 (կազմված 10.07.2013թ.), և թիվ 10 (կազմված 21.03.2014թ.) որոշումները և վերջիններիս հետ կնքված աշխատանքային պայմանագրերի պատճենները:

Ընկերության տնօրենը նշեց, որ Բացի վերոնվածը «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն ս.թ. մայիսի 10-ից անցնելով իր բնականոն աշխատանքային ռեժիմին՝ դիմել է Երևանի քաղաքապետարան և հայտնել, որ Երևանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճի նորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների սահմանված ժամկետում ավարտված չլինելը պայմանավորված է եղել նաև նրանով, որ թատրոնի դահլիճի նոր օդափոխության համակարգի տեղադրման համար անհրաժեշտ հզորությամբ էներգամատակարարումը բացակայում է, ինչով պայմանավորված Ընկերությունն անհրաժեշտ է համարում դիմել «Հայաստանի

էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին՝ համապատասխան հզորությամբ էներգամատակարարման համար տեխնիկական պայմաններ ստանալու նպատակով, ինչը թույլ կտար շարունակել Պայմանագրով նախատեսված թատրոնի դահլիճի օդափոխության մասով նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները: Ըստ այդմ, Ընկերությունը Պատվիրատուին խնդրել է Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգել մինչև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից անհրաժեշտ հզորությամբ էներգամատակարարման ստացման համար տեխնիկական պայմանների ապահովումը:

Սակայն, Երևանի քաղաքապետարանը Ընկերությանը 18.05.2018թ. ուղղված թիվ 61/685 գրությամբ տեղեկացրել է, որ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը՝ միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Նշված փաստարկները հիմնավորելու նպատակով՝ Ընկերության տնօրենը Բողոքներ քննող անձին ներկայացարեց «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից Երևանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի տնօրենին տրամադրված «Սպառողի սնման ուղղության, լարման, առավելագույն թույլատրելի հզորության վերաբերյալ» տեղեկանքը, համաձայն որի թատրոնի շենքի սնումն իրականացվում է տրանսֆորմատորային ենթակայանից երկու տարբեր գծերով, որոնց թույլատրելի առավելագույն հզորությունները կազմում են համապատասխանաբար 30 կՎտ և 23 կՎտ:

Բողոքներ քննող անձի պահանջով Ընկերության կողմից ներկայացվեցին նաև VHA-DN/FN(R) մոդուլային չիլերների տեխնիկական անձնագրերում ներառված տվյալները, համաձայն որոնց տեղադրվող սարքավորումների և համալրող սարքերի սպառման անհրաժեշտ առավելագույն հզորությունը 37,5 կՎտ: Նկատի ունենալով, որ օդափոխության համակարգի նախագծում նախատեսված բոլոր սարքերի և սարքավորումների անհրաժեշտ առավելագույն հզորությունները միասին կազմում են 12 կՎտ՝ Ընկերության տնօրենը նշեց, որ թատրոնի շենքին անհրաժեշտ է առնվազն 49,5 կՎտ հզորությամբ լրացուցիչ հոսանք, քանի որ այն ներկայումս սպառում է և ունի 53 կՎտ առավելագույն հզորություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն Երևանի քաղաքապետարանի հետ 16.03.2018թ. կնքել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/16» ծածկագրով գնման պայմանագիրը, սակայն պայմանագրով սահմանված ժամկետում չի կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունները ողջ ծավալով, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

- Հայաստանի Հանրապետության տարածքում տեղի ունեցող քաղաքական հուզումները ժամանակագրական առումով մասնակիորեն համընկել են Պայմանագրի

կատարման ժամկետին, մասնավորապես, ապրիլի 13-ից մայիսի 8-ը Ընկերության աշխատակիցները մասնակցել են հանրապետությունում ընթացող խաղաղ անհնազանդության երթերին և հանրահավաքներին՝ դիմելով գործադուլի, ինչով պայմանավորված Ընկերությունը չի կարողացել Պայմանագրով նախատեսված աշխատանքները հասցնել ավարտին:

- Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված՝ Երևանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճի օդափոխության համակարգի տեղադրման համար անհրաժեշտ հզորությամբ էներգամատակարարումը բացակայում է, ինչով պայմանավորված Ընկերությունն անհրաժեշտ է համարել դիմել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին՝ համապատասխան հզորությամբ լրացուցիչ էներգամատակարարման համար տեխնիկական պայմաններ ստանալու նպատակով, ինչը թույլ կտար շարունակել Պայմանագրով նախատեսված թատրոնի դահլիճի օդափոխության մասով նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ նման պայմաններում «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն օբյեկտիվորեն զրկված է եղել Պայմանագրով նախատեսված ժամկետում ստանձնած պարտավորությունները ողջ ծավալով կատարելու հնարավորությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 24.05.2018թ. թիվ 03/26-3/9305-18 գրությամբ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00883436) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ